ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց

- ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)

2018 թ. հուլիսի 23-25-ը

- ՆՊԱՏԱԿԸ

Հանդիպելու ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկուն, ինչպես նաև ներկա գտնվելու Ռուսաստանի օպերայի և բալետի պետական ակադեմիական մեծ թատրոնում կայանալիք Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությանը:

Հայ-ռուսական մշակութային համագործակցության շրջանակում հուլիսի 23-25-ը մեկնեցի Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)՝ հանդիպելու ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկուն, ինչպես նաև ներկա գտնվելու Ռուսաստանի օպերայի և բալետի պետական ակադեմիական մեծ թատրոնում կայանալիք Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությանը: Ինձ հետ Մոսկվա մեկնել էր նաև նախարարի տեղակալ Ն. Ղարիբյանը:

Հուլիսի 24-ին կայացավ աշխատանքային հանդիպումը Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարար Վլադիմիր Մեդինսկու հետ, որին ներկա էին նախարարի տեղակալ Ն. Ղարիբյանը, ՌԴ մշակույթի նախարարության ներկայացուցիչներ:

Շնորհակալություն հայտնեցի ռուս գործընկերոջս հանդիպմանը մասնակցելու համար: Զրույցի ընթացքում երկուստեք բարձր գնահատվեց ներկա մշակութային համագործակցությունը, քննարկվեցին մշակույթի ոլորտում հետագա համագործակցության հեռանկարները, անդրադարձ կատարվեց կինոարտադրության ոլորտում համագործակցության նոր ուղիների մշակմանը: Մասնավորապես՝ գործընկերոջս առաջարկեցի երկու պետությունների համապատասխան գերատեսչությունների համագործակցությամբ ստեղծել կինոոլորտի համատեղ հայ-ռուսական հիմնադրամ: Կառույցի հիմնական գործառույթներից է աջակցությունը համատեղ նախագծերի ստեղծմանը, ինչպես նաև ԱՊՀ և միջազգային կինոշուկայում արտադրանքի պատշաճ ներկայացումը:

Զրույցի ընթացքում ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկին հրավիրեց ինձ մասնակցելու ս. թ. հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգում (ՌԴ) կայանալիք ԱՊՀ մասնակից պետությունների Հումանիտար համագործակցության խորհրդի նիստին:

Անդրադարձ կատարվեց նաև ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ ստեղծված «Ամեն» երաժշտական նախագիծը (նախագծի գլխավոր պրոդյուսեր՝ Հասմիկ Զախմախչյան) 2019 թ. ընթացքում բեմադրելու հետ կապված խնդիրներին:

Նույն օրը երեկոյան ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկու, ՌԴ-ում ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպան Վ. Տողանյանի և նախարարի տեղակալ

Ն. Ղարիբյանի ուղեկցությամբ ներկա գտնվեցի Մոսկվայի Մեծ թատրոնում կայացած Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետի բեմադրությանը՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 115 և Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման 100-ամյա հոբելյաններին: Ներկայացման դեկորն ու հագուստները վերականգնվել են աշխարհահռչակ նկարիչ Մինաս Ավետիսյանի էսքիզներին համապատասխան: Բեմադրությունը ղեկավարում էր Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, Ռուսաստանի վաստակավոր արտիստ Կոնստանտին Օրբելյանը, որում ներգրավված էին նույն թատրոնի պարողները: Ներկայացմանը ներկա էին նաև երկու երկրների պետական, քաղաքական և մշակութային գործիչներ, ՌԴ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, արվեստասեր հանրությունը, հայ համայնքի ներկայացուցիչները:

Մոսկվա գործուղման ընթացքում՝ **հուլիսի 25-ին,** կայացավ հայաստանյան պատվիրակության հանդիպումը ռուսաստանաբնակ հայազգի արվեստագետների և հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման սկզբում մասնակիցներին տեղեկացրի ՀՀ մշակույթի նախարարության նոր քաղաքականության ու ռազմավարության մասին՝ կարևորելով նաև արտերկրում բնակվող և ստեղծագործող հայ արվեստագետների դերն ու նշանակությունը հայ մշակույթի պահպանման և հանրահռչակման գործում:

Այնուհետև խոսքը փոխանցեցի նախարարի տեղակալ Ն. Ղարիբյանին, ով, որպես նախարարության արտաքին մշակութային համագործակության պատասխանատու, ներկայացրեց հայ-ռուսական մշակութային

համագործակցության շրջանակում առաջիկայում իրականացվելիք միջոցառումներն ու ծրագրերը:

Բանախոսների կողմից ներկայացվեցին երկու՝ «Русские армяне» նախագիծը և «ARMENADA» խորագիրը կրող արվեստի միջազգային փառատոնը:

Նույն օրը նախարարի տեղակալ Ն. Ղարիբյանի և ՌԴ-ում ՀՀ դեսպանության աշխատակիցների ուղեկցությամբ այցելեցի ռուսական և խորհրդային արվեստի խոշորագույն կենտրոններից մեկը՝ Տրետյակովյան պատկերասրահ:

Նույն օրը այցելեցի նաև Մոսկվայի նկարչի կենտրոնական տանը բացված բրիտանացի գրաֆիտի ոճի հայտնի նկարիչ Բենկսի անհատական ցուցահանդեսը, որի շրջանակում ներկայացված էր ժամանակակից արվեստի առաջատար թանգարաններից, այդ թվում՝ Lilley Fine Art և 30 անհատական հավաքածուներից ավելի քան 100 աշխատանք:

Շնորհակալություն եմ հայտնում Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. պարոն Վարդան Տողանյանին և դեսպանության ողջ անձնակազմին՝ գործուղմանս ընթացքում գործուն աջակցություն ցուցաբերելու համար:

- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկու հետ հանդիպման ընթացքում քննարկվեց.

- ***երկու պետությունների համապատասխան գերատեսչություններ-***

րի համագործակցությամբ համատեղ հայ-ռուսական կինոյի ոլորտի հիմնադրամի ստեղծման հարցը: Կառույցի հիմնական գործառույթներից է լինելու աջակցությունը համատեղ նախագծերի ստեղծմանը և դրանց հետագա ներկայացումը ԱՊՀ և միջազգային կինոշուկայում, այդ թվում՝ կինոփառատոների, կինոդիտումների և այլ միջոցառումների շրջանակում:

- *ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ ստեղծված «Ամեն» երաժշտական նախագիծը (նախագծի գլխավոր պրոդյուսեր՝ Հասմիկ Չախմախչյան) 2019 թ. ընթացքում բեմադրելու հարցը:*
- *ՌԴ մշակույթի նախարար Վ. Մեդինսկու կողմից փոխանցվեց ս. թ. հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգում (ՌԴ) կայանալիք ԱՊՀ մասնակից պետությունների Հումանիտար համագործակցության խորհրդի նիստի հրավերը:*
- *Ռուսաստանաբնակ հայազգի արվեստագետների և հայ համայնքի ներկայացուցիչների հետ քննարկվեցին «Русские армяне» նախագիծի և «ARMENADA» խորագիրը կրող արվեստի միջազգային փառատոնի հետ կապված հարցերը:*

ՀՀ մշակույթի նախարար՝

Լ. ՄԱԿՈՒՆՑ